10/18

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 07 » 07 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 0088-22

***Ձեռնարկողը՝*** ***«Մաունթին վիլիջ» ՍՊԸ***
*ՀՀ ք.Երևան, Բաղրամյան պողոտա 6*

***Գործունեությունը՝*** ***Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Գետափնյա 7/10 հասցե*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 11 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**թիվ ԲՓ** 0088-22
**<07> 07 2022թ.**

# *«Մաունթին վիլիջ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «Մաունթին վիլիջ» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան Գետափնյա 7/10 հասցե |

***Ներածական մաս.*** «Մաունթին վիլիջ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 31012022-11-0002 /ծածկագիրը՝ 11-003-0158-0077/, Դիլիջանի համայնքապետարանի կողմից 08.02.2022թ. տրված N Ա1-06 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.65689 հա::

***Նկարագրական մաս.*** Նախատեսվող գործունեության կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում, Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհի ձախ կողմում, «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» -ի հարևանությամբ: Հողատարածքը տարածված է Աղստև գետի միջին հոսանքում և հեռավորությունը Աղստև գետից կազմում է 51մ: Տարածքը աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով և լեռնային բազմաբնույթ ռելիեֆով, որի մոտակայքում այլ բնակելի կամ արտադրական շենք-շինություններ չկան:

Տեղանքի ռելիեֆի միջին թեքությունը կազմում է 15°÷18°, իսկ բուն նախատեսվող գործունեության տարածքում այն կազմում է 2°÷8°: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1270÷1360 մետրերի սահմաններում:

Ուսումնասիրված և հարակից տարածքներում հայտնի են տարբեր տեսակի, տարբեր դինամիկայի և տարբեր քիմիական կազմի ջրեր: Նախկին ուսումնասիրողների կողմից կատարված ջրաերկրաբանական աշխատանքների արդյունքների հիման վրա տարածքում դասակարգված են հետևյալ ջրատար հորիզոնները՝ (1) չորրորդական հասակի նստվածքներում, (2) նստվածքային և հրաբխանստվածքային ապարներում և վերջապես (3)

պալեոգեն-նեոգեն հասակի ինտրուզիվ (ներժայթքային) ապարների հաստվածքում [1-2]: Ինչպես ցույց են տալիս նոր ստացված տվյալները ուսումնասիրված տեղամաս 2-ում հիմնականում առկա են առաջին դասին պատկանող ջրատար հորիզոններ, որոնք ներկայացված են ժամանակակից և չորրորդական նստվածքներով: Մասնավորապես, այդ հորիզոնները առկա են Աղստևի ալուվիալ-պրոլուվիալ նստվածքներում, որոնք ներկայացված են ճալաքարա-կոպճային, ավազային և կավավազային ապարներով: Նրանց տեղադրման խորությունը տարածքում տատանվում է 2,5÷4,0մ: Ստորերկրյա ջրերը հանդիպում են տարածքի դելուվիալ-էլուվիալ ապարներում, որոնք տարածված են լանջային տեղամասերում հանդիպում են կավավազային, ավազակավային, ճալաքարային գրունտներում: Ջրերը այդ ապարներում ծակոտկեն-շերտային բնույթի են: Որպես ջրամերժ շերտ հիմնականում հանդիսանում է Դիլիջանի շերտախումբը: Առանձին դեպքերում ջրատար հորիզոնները զբաղեցնում են բավականին զգալի տարածքներ: Ջրատար հորիզոնները սնվում են հիմնականում ինֆիլտրացիոն ճանապարհով՝ թույլ տեկտոնական գոտիներով, սողանքային հաստվածքներով և տարբեր լիթոլոգիական կազմի ապարների կոնտակտներով (հպումներով): Ջրատար հորիզոնները տարածքի նստվածքային և հրաբխային-նստվածքային ապարներում բացակայում են:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ հորատման աշխատանքների լաբորատոր և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոգենի ժամանակաշրջանի հրաբխանստվածքային ապարները՝ հողմնահարված, քայքայված, բեկորատված, փոխակերպված անդեզիտներն ու պորֆիրիտները, որոնք ծածկված են ալյուվիալ և էլյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի ժ1 §6գ IV կարգ է և ժ3 §5բ III կարգ է:

Ըստ երկրաբանական հետազննության արդյունքների՝ տարածքն ընդհանուր առմամբ պիտանի է շինարարության համար:

Օգտագործելով տեղանքի պանորամային տեսարանը դեպի «Դիլիջան» ազգային պարկ նախագիծը բախվում է բնական գեղեցկությունը պահպանելու մարտահրավերին՝ ստեղծելով բազմաֆունկցիոնալ բնակելի շենք: Mountain Dwelling-ը ձգտում է վերադառնալ լանդշաֆտի հետ միաձուլվելու տեղական ճարտարապետական ավանդույթին նոր ձևով:

Նախագիծն առաջարկում է կառուցել աշխույժ բնակելի թաղամաս, որը միաձուլվում է շրջակա բնությանը՝ դառնալով նրա ներդաշնակ մի մասը:

Նախագիծը բաղկացած է զբոսայգուց, որը կասկադով իջնում է, հետևելով տեղանքի ռելիեֆին՝ ստեղծելով 4 տեռաս (հարկ), կազմված տների շարքերից:

Տների դասավորվածությունը հետևում է «սղոցաձև» կոնֆիգուրացիային՝ ռացիոնալ 6մx6մ կառուցվածքային ցանցով, ստեղծելով արդյունավետ մոդուլ՝ պրագմատիկ և ֆունկցիոնալ հատակագծով բնակարանների լայն տեսականի ստեղծելու համար:

Ծրագրի աստիճանաձև դասավորվածությունը հետևում է տեղանքի բնական թեքությանը, ապահովելով 3.3 մ բարձրություն հատակից հատակ, տեսարաններ և լանդշաֆտային բացօթյա տեռասներ բոլոր միավորների համար:

Շրջանառության և մուտքի ուղիները տեղանքի միջով և դեպի յուրաքանչյուր միավոր խցկված են շենքի կառուցվածքի և տեղանքի ռելիեֆի միջև՝ ստեղծելով ծակոտկեն շինություն՝ ներսի և դրսի հետաքրքիր փոխհարաբերությամբ: Այս ճկուն շրջանակում առաջարկվող բնակելի տների լայն տեսականին՝ 36մ²-ից մինչև 144մ², սահմանում է բնակարանների բազմազան տեսականի բնակիչների լայն շրջանակի համար՝ երաշխավորելով հարմարվողականություն շուկայի փոփոխվող պահանջներին:

«Սղոցաձև» տեռասի կոնֆիգուրացիան հնարավորություն է տալիս տպավորիչ պանորամային տեսարանների և տների օպտիմալ խաչաձև օդափոխությանը, բնական լույսի

ներթափանցմանը, ինչպես նաև ջրի պաշարների համալրման և զիգզագաձև ծավալների արդյունքում ստեղծված բակերի լրացուցիչ կանաչ տարածքների համար:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցապատման ընթացքում օգտագործվող շինարարական նյութերը լինելու են աստիճանաբար փոփոխվող՝ հիմքի հատվածը բազալտից մինչև փայտ վերևի մասում, որտեղ այն սահուն անցնում է կանաչապատված հանրային այգու:

Տեղական նյութերի օգտագործումը էական նշանակություն ունի նախագիծը իր ժառանգության անբաժանելի մաս դարձնելու համար՝ միաժամանակ նվազեցնելով շենքի և շինարարական գործընթացների մեջ ածխածնի հետքը:

Կոմպակտ տեռասների և մակարդակների միջև բացօթյա բացվածքների շնորհիվ նախագծի ողջ ընթացքում ձևավորվում են տարբեր ընդհանուր տարածքներ:

Վերևում գտնվող հանրային զբոսայգուց մինչև ներքևում գտնվող ավելի փոքր փոխկապակցված բակային տարածքները կստեղծի ավելի մեծ հանրային տարածքների հյուսվածք ավելի փոքր մասշտաբներով, ինչը կարևոր բաղադրիչ է տարածաշրջանի քաղաքաշինական վերակենդանացման համար:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 6568.9 ք.մ,
- Կառուցապատման տարածքի մակերեսը՝ 2627 ք.մ,
- Ասֆալտե ճանապարհ՝ 144 ք.մ,
- Սալվածքներ, մայթեր՝ 479.9 ք.մ,
- Կանաչապատ ճանապարհ՝ 660 ք.մ,
- Գազոն՝ 2658 ք.մ,
- Տանիքների կանաչապատում՝ 1513 ք.մ,
- Ստոգետնյա ավտոկայանատեղիներ՝ 33 ավտոմեքենա,
- Բնակարանների քանակ՝ 33 բնակարան:

Կառուցապատման ենթակա հողատարցքում բացակայում են բնության հատուկ պահպանվող և պատմամշակույթային հուշարձանների տարածքներ:

Տարածքը ունի բարդ ռելիեֆ, կառուցապատված չէ, ինչպես նաև հատակագծային սահմանափակումներ չկան:

Հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 0.2-0.5 մ է, տարածված է բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 1300 մ$^3$:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի հեռավորությունները՝ մոտակա շենք-շինություններից, «Դիլիջան» ազգային պարկի սահմանից, Աղստև գետից պատկերված է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում (այսուհետ՝ Հայտ) ներկայացված իրադրության սխեմայում:

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի դրույթներով: Շինարարական աշխատանքների իրականացման ընդհանուր տևողությունը նախատեսված է 19 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով,
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում,
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅՏԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN

- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն:

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են «հետ-բահ» էքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է աշտարակային կռունկ:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը շին. հրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ,
- Քանդման աշխատանքներ,
- Հողային աշխատանքներ,
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ,
- Պատեր և միջնապատեր,
- Տանիքային աշխատանքներ,
- Ներքին ինժեներական ցանցեր,
- Հարդարման աշխատանքներ,
- Երեսպատման աշխատանքներ,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները և մեխանիզմները.

Էքսկավատոր՝ 2հատ, բուլդոզեր՝ 1հատ, շարժական կոմպրեսոր՝ 1հատ, վերամբարձ ավտոկռունկ՝ 1հատ, աշտարակային կռունկ՝ 1հատ, տոփանիչ՝ 2հատ, գոյքային կաղապարամած՝ 1կոմպլ., թրթրիչ խորքային էլեկտրական՝ 2հատ, փոխարկիչ թրթրիչների համար՝ 2հատ, եռակցման տրանսֆորմատոր՝ 2հատ, դակիչ ձեռքի էլեկտրական՝ 3հատ, ձեռքի էլեկտրական դուր՝ 3հատ, հղկող մեքենա՝ 3հատ, թրթրագլդոն՝ 1հատ, ավտոբետոնախառնիչ՝ քանակը հաշվարկով, ավտոբետոնատար՝ քանակը հաշվարկով, ինքնաթափ ավտոմոբիլ՝ քանակը հաշվարկով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ժամանակ /2 փուլերի համար/ ընդհանուր հանույթը կազմում է 11700 մ³, որից 3500 մ³ հետագայում կօգտագործվի հետլիցքի համար: Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տեղանքի բարեկարգման և հարթեցման համար:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 51 մարդ, որից.

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ՝ 40 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ՝ 8 մարդ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, համաձայն՝ Դիլիջանի քաղաքապետարանի կողմից հաստատված տարածքի բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, որի տեսակային և քանակական կազմը ստորև բերված է՝

- Սոճի՝ 55 հատ,
- Շիմշատ՝ 80 հատ,
- Բողի՝ 4 հատ,
- Լորենի՝ 6 հատ,
- Հացենի՝ 3 հատ,
- Կաղնի՝ 5 հատ,
- Թխկի՝ 4 հատ,
- Գազոն՝ 2658 ք.մ,
- Կանաչ տանիք՝ 1513 ք.մ:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացվելու են հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- ոռոգման համակարգի անցկացում,
- համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո նշված տարածքում ծառատունկն իրականացվելու է ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացվելու է խնամքի աշխատանքներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Համաձայն «Քեմփ Վենչուրս» ՓԲ ընկերության 01.04.2022թ. գրության՝ ք.Դիլիջան, Գետափնյա 7/10 հասցեում «Մաունթին վիլիջ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կանաչապատ տարածքների ոռոգումն համակարգը կսնվի «Քեմփ Վենչուրս» ՓԲ ընկերությանը պատկանող բնակելի շենքերի (ք.Դիլիջան, Գետափնյա 7/5) կանաչ տարածքների ոռոգման համար կառուցված ոռոգման համակարգից /համաձայնագիրը կցվում է Հայտի «Հավելվածներ» բաժնում/: Կանաչապատ տարածքի 1 մ$^2$-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է՝ 4-6 լ/մ$^2$: Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար գազոնների ոռոգման առավելագույն արժեքը կազմում է՝ $n_6$=0.006 մ$^3$/մ$^2$: Ոռոգման համար ջրապահանջը կազմում է 8759.1 մ$^3$/տարի:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շինարարության ընթացքում օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար (225մ$^3$/շին.ժամ. կամ 0.75մ$^3$/օր) և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար (616.51մ$^3$/շին.ժամ. կամ 1.248մ$^3$/օր):

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի և 21.03.2022թ. տրված N ՄՇ/6242 գրության, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն:

Շինարարական աշխատանքների ընթացքում բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կենցաղային կոյուղու համակարգը միացվելու է քաղաքային կոյուղու համակարգին, միացումը տարածքում գոյություն ունեցող դիտահորին:

Ներքին հեղեղային կոյուղին նախատեսվում է հավաքել պահուստային բաքում և համապատասխան զտումից հետո օգտագործել տարածքի ոռոգման նպատակներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ էլեկտրամատակարարման լարման մակարդակը՝ 0.4 կՎ, պահանջվող հզորությունը՝ 450 կՎԱ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի գազամատակարարումը նախատեսված է իրականացնել ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի, ինչպես նաև 30.05.2022թ. տրված N 109 գրության, համաձայն որի՝ բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կաթսայատան գազիֆիկացման նպատակով տրամադրվում է նախատեսվող գազատարի համար միացման կետ գործող գազատարից՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր պատվիրելու նպատակով: Մինչև գազատարի կառուցման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է նախագծերը նախապես համաձայնեցնել Տավուշի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի Դիլիջանի գազի տեղամասի հետ: Նախատեսվող կաթսայատան գազատարի համար միացման կետում գործող գազատարի տրամագիծը՝ D=110x13.7մմ, անհրաժեշտ քազի քանակը՝ 60 մ³/ժ:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ:
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախագծով նախատեսված է օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Օդի մատակարարումը և հեռացումը կատարվելու է ռեկուպերացիոն օդի ներածման-արտածման կոմպակտ սարքերի միջոցով որոնք նախատեսված են ամեն բնակարանի համար ու արտածվող օդի հաշվին ներածվորդ օդի տաքացման հետևանքով ապահովվում է բարձր էներգաարդյունավետություն, որը կարող է հասնել ընդհուպ մինչև 60%-ի:

Էներգաարդյունավետության էլ ավելի բարձրացման և ընդհանուր արդյունավետ աշխատանքի ապահովման համար ողջ օդափոխման համակարգը նախետեսվում է համալրել ավտոմատ ղեկավարման համակարգով, որի ղեկավարման ալգորիթմը ծրագրավորված է այնպես, որ ստանալով CO2-ի, խոնավության և հոտերի մասին ինֆորմացիա համապատասխան տվիչներից, համակարգը ինքն է որոշում բնակարանի, որ հատվածում պետք է ինտենսիվացնի օդափոխության համակարգը, իսկ որ մասում նվազեցնի:

Օդափոխության սարքի ինտենսիվ աշխատանքի կարգավորումը կատարվում է նրանում առկա օդամուղների պտուտաթվերի կարգավորմամաբ և ամեն սենյակի համար նախատեսված օդատարերում օդի հոսքի կարգավորիչ փականների բացմամբ ու փակմամբ:

Արդյունավետ աշխատանքին նպաստում է նաև թարմ օդի մատակարարման և համեմատաբար աղտոտված օդի արտածման կոնցեպտուալ լուծումը որով նախատեսվում է թարմ օդը մատակարարել ներքին գոտուց, համեմատաբար աղտոտված օդը արտածել վերին գոտուց:

Ջեռուցնան և հովացման համակարգը նախատեսվում է «Չիլլեր-Կաթսա-Ֆանկոյլ» երկխողովականի համակարգ, որն իրենից ենթադրում է որպես ջերմարտադրող սարք ունենալ կաթսա(ներ), իսկ որպես ցրտարտադրող սարք՝ չիլլեր, ջերմա-ցրտա հաղորդականությունն էլ ապահովվում է ջերմության և ցրտի սպառիչներով, որոնց տեսակի և տիպի նկատմամբ կա նախընտություն, որ նախատեսվի ներհատակային օդամխիչով կոնվեկտորներ հնարավորության դեպքում:

Ջեռուցման ժամանակաշրջանում ներհատակային կոնվեկտորները ապահովելու են առավելագույնս բարձր արդյունավետություն, քանի որ նրանք ջեռուցելու են սենքերը ներքին գոտուց, իսկ նրանում առկա օդամղիչը հարկադրաբար օդին ստիպելու է որպեսզի իջնի վերին գոտուց դեպի ներքին գոտի այս ամենով ապահովելու է օդի խառնումը և սենյակում հնարավորինս քիչ ջերմաստիճանային տատանումներ է զգացվելու:

Ամեն հարկի միջանցքում նախատեսվելու է ջերմաբաշխիչ հանգույց, որում ըստ նախագծի լինելու է ջերմային հաշվիչները ամեն տան համար, հաշվեկշռային փականները էլ. շարժաբերով BMS համակարգին միանալու հնարավորությամբ և այլ բաղկացուցիչ մասեր:

Կոնդենսատի հեռացման համակարգը, նախատեսվում է սանիտարահիգիենիկ պայմաններից ելնելով հեռացնել այն կոնդենսատի հեռացման համար նախատեսված անջատ համակարգով, որը վերջում պետք է միանա անձրևատար համակարգին: Անձրևատար համակարգին միանալուց առաջ նախատեսվելու է «Ս»-ա ձև սիֆոն անցանկալի հոտերից խուսափելու համար: Հորիզոնական խողովակաշարերում ապահովելու 1 % թեքություն:

Նախատեվսում է ավտոնոմ կցակառույց շինության մեջ կոնդենսացիոն պատի կաթսաներով կաթսայատուն: Կաթսայատանը տեղակայվելու են՝

- Տաք ջրի պատրաստման հանգույցը իր կուտակիչ ջրատաքացուցիչ բաքերով,
- Պոմպերը, որոնք մղելու են կաթսայից կամ չիլլերից հիդրոսլաք, հիդրոսլաքից դեպի ջեռուցման-հովացման համակարգ, տաք ջրի վերաշրջանառության պոմպը,
- Ընդարձական բաքերը,
- Բաշխիչ սանրիկները և այն բաղկացուցիչ մասերը, այդ թվում նաև ճնշման կարգավորման և դեգազացիայի կայանքը:

Կոնդենսացիոն տեսակի կաթսաները ապահովվելու են բարձր էներգաարդյունավետություն:

Ջեռուցման-հովացման համակարգի, ինչպես նաև կաթսայի և չիլլերի շրջանառության պոմպերը նախատեսվում են ինվերտորային կարգավորմամբ առավելագույն էներգաարդյունավետության ապահովման համար:

Չիլլերը նախատեսվում է տեղակայել շենքի ամենախուլ բացօդյա անկյունում՝ ձայնից խուսափելու համար: Չիլլերը նույնպես նախատեսվում է ինվերտորային:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

| | Անվանումը | Վտանգավո-ության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1. | Շինարարական աղբ | IV | 9120060001004 | 960 մ³ |
| 2. | Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող | V | 3140110008095 | 11700 մ³ |
| 3. | Տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV | 9120040001004 | 0.8 տ |

Համաձայն Դիլիջանի համայնքապետարանի կողմից 23.06.2022թ. տրված N1209-22 գրության՝ Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման ժամանակ առաջացած շինարարական աղբի տեղափոխման վայրը հանդիսանում է Դիլիջանի համայնքային աղբավայրը, որը գտնվում է Հաղարծին գյուղական բնակավայրի վարչական տարածքում :

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Նախատեսվող գործունեության տարածքում կատարվել են սեյսմոշրջանացման աշխատանքներ, որոնց հիման վրա տվյալ տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (Amax=0.4g): Ինչպես նաև լանջային տեղամասերը, որոնք համեմատաբար կտրուկ թեքված են դեպի Աղստև գետի ժամանակակից հովիտը և որտեղ գրունտային ջրերը տեղակայված են համեմատաբար բարձր նիշերում (մոտ են երկրի մակերեսին), սեյսմիկ տեսանկյունից գնահատվում են 9 բալից բարձր:

Շինարարական հրապարակում նախատեսվում է տեղադրել ժամանակավոր շինություններ՝ պահակակետ, ամրանի և փայտանյութի պահեստ, քարի և սալիկների պահեստ, սորուն նյութերի պահեստ, գրասենյակ, բուժկետ, հանդերձարան, բիոզուգարան, ցնցուղարան, ճաշարան, որոնց տեղադիրքը կհստակեցվի նախագծային աշխատանքների ընթացքում:

Շինարարական մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով շինարարության վարման մատյանում:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների: Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

**Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Դիլիջանի համայնքապետարանի համաձայնեցմանը,
- կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել կաթիլային համակարգի միջոցով, ինչպես նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Դիլիջան քաղաքի, Գետափնյա 7/10 հասցեում «Մաունթին վիլիջ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կանաչապատ տարածքների ոռոգման համակարգը կսնվի «Քեմփ Վենչուրս» ՓԲ ընկերությանը պատկանող բնակելի շենքերի (ք.Դիլիջան, Գետափնյա 7/5) կանաչ տարածքների ոռոգման համար կառուցված ոռոգման համակարգից,
- կիրականացվի շին. տեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, ինչից առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանում կկատարվի մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում կներգրավվի ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաար կստուգվի, կկարգաբերվի տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, կբացառվի անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված՝ շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարաության ընթացքում նախատեսվում է հատկացնել 700 հազ. ՀՀ դրամ:

***Պարճառաբանական մաս.*** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության

կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

**Փորձաքննական պահանջներ**

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Դիլիջանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ

պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մաունթին վիլիջ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Գետափնյա 7/10 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վրեժ Վարդանյան